

հոգեւորի սէրը մտքին մէջ վառի : Թիւ որ տղան բանի մը համբերէր կամ ուրիշ առաքինութիւն մը ընէր, կը գովէին ու կը վարձատրէին որ աւելի յորդորուի առաքինութեան ետեւէ ըլլալու : Թիւ որ կուզէին որ պակասութենէ մը ետ կենայ, պարգև կը խոստանային . ու ան օրը կամ ան շաբաթը Թիւ որ նոյն պակասութիւնը չընէր՝ պարգևը կուտային . այսպէս շատ պակասութիւնները շտկեցին քիչ ատենի մէջ :

Ուսման կողմանէ ալ տան մէջ կը սորվեցնէին երկու ժամ կարգալ, մէկ ժամ գրել . և շաբաթուն մէջ օր մը հանգիստ կը թողուին որ անմեղութեամբ ուրախանայ ու զուարճանայ : Երբոր եօթը ութը տարեկան եղաւ, սկսան խոստովանութեան ու հաղորդութեան վերաբերեալ բաները սորվեցնել, ու միշտ կը յորդորէին որ ջերմեւանդ ըլլայ՝ իր ստոյն սուրբ չարչարանացը, և ստէպ պատարագ տեսնելու անհոգ չըլլայ : Արպատուիւրէին որ ամէն իրիկուն քննութիւն ընէ իր մեղքերուն վրայ, ու Թիւ որ մեղք մը ըրեր է՝ զղջայ և առաջագործ մէյմըն ալ չընելու, նոյնպէս առաւօտը անկողինէն ելլելու ատեն՝ նոյն օրուան ընելու գործքերը լստուծոյ յանձնէ :

Լհա այսպէսով մեծցուցին ան երջանիկ ծնողքը իրենց սիրական զաւակը, որ մեծնալով եղաւ առաքինի ու կը թեալ մարդ, ամէնուն սիրելի, ծընողացը պարծանք, օտարներուն բարի օրինակ, ներքին ու արտաքին կատարելութիւններով զարդարուած . և չափաւոր հարստութիւնը աղէկ բանեցնելով՝ աւելի հարըստցաւ, աղքատաց ողորմութիւնն ալ քանի գնաց աւելցուց . ծնողացը օրհներէքին հետ՝ ամէն տեսնողէն գովասանք ալ լսեց, ու երջանիկ կեանք մը ունեցաւ :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հոանջի համար ընելու պատրաստութիւններուն վրայ :

Երկրագործի մը համար գետին մշակելը գիտնալ բաւական չէ . պէտք է գիտնայ նաև Թիւ մշակած երկրին բերքը ինչպէս պիտի ժողվէ : Լս բանիս մէջ պզտի անհոգութիւն մը մեծամեծ փնասներու պատճառ կրնայ ըլլալ, ու աշխատանքը փճացնել : Երբ հոս ընդհանուր կանոնները միայն գնենք ամէն տեսակ բուսոց համար . ետքը զատ զատ կրիօսինք Թիւ ամէն տեսակ բուսոց վրայ ինչ մասնաւոր հոգ ընելու է հնձելու կամ քաղելու ատեն : Լս աշխատանքին իրեք անուն կուտան երկրագործները . մէյմը հոանջ կամ հիջել, որ արմտիքներու համար կըսուի . մէյմը քաղող կամ քաղել, որ պտուղներու համար կըսուի . մէյմըն ալ այգիէն իւր կամ ինչ, որ այգիներու քիւ խաղողի համար կը բանեցուի :

Նշմարիտ առած մը կայ որ Թիւ պէտ ամէն բանի կը յարմարի՝ բայց աւելի աս նիւթիս մէջ հարկաւոր է, քիւ Թիւ ան բանն որ այսօր կրնաս ընել վաղուան մի թողուր :

Արպէս զի հունձքը կամ քաղողը յարմար ատենին լմննայ՝ պէտք է նայիլ Թիւ որչափ աշխատաւոր պէտք է . ասոնց Թիւ փորձով միայն կըսորվուի . վասն զի Թիւ որ խիստ շատ աշխատաւոր գործածես, աւելի շփութութիւն կը ըլլայ . իրենց վերակացուն ալ դժուար կը ըլլայ ամէնուն վրայ ուշադրութիւն ընելը . ասկէ կը հետեւի խառնակութիւն, շփութութիւն ու վերի վերոյ գործողութիւն : Իսկ Թիւ որ գործաւորներուն Թիւ խիստ քիչ ըլլայ, գործողութիւնը ետ կը մնայ, և բերքը սաստիկ հասուննալով՝ քանակը կը քիչնայ ու արժէքը կը ցածնայ :

Երբեք ու ծառաներուն շատու-

Թիւնը կամ քիչու թիւնն ալ բանւոր-
ներուն համեմատ պիտի ըլլայ . Թէ
որ ծառաները քիչ են՝ դրսէն օտար
մարդ կրնայ բռնուիլ . ասոր վարձքին
տեղը սովորաբար ստակ չտրուիր ,
հապա երկրին բերքէն , առաջուց
խօսք դնելով : Եւսանկ օտար մարդ
բռնելու համար շատ զգուշութիւն
ընելու է . և աւելի աղէկ է ամէն
տարի նոյն մարդը բռնել , որով
երկու օգուտ կ'ըլլայ . մէյմը որ վե-
րակացուն չհոգնիր ամէն տարի նոր
նոր մարդկանց բնութիւնները սոր-
վելու , մէյմըն ալ որ ան գործա-
ւորն ալ իր ընելիքը գիտնալով՝ շատ
ատեն չկորսնցըներ :

Պէտք է նայիլ որ համբարները ,
ցորեննոցները ու մարագները պատ-
րաստ ու մաքուր ըլլան . տանիքները
ծակտիք ու ջուր անցնելու տեղ չու-
նենան , և պատերուն ծեփը Թափած
չըլլայ : Եւսանկ աւելի նայելու որ
մկներուն ծակերն ու բոյները աղէկ
գոցուին :

Նմանապէս գործիքները , սայլերն
ու սայլակները պատրաստ ըլլան , և
սայլերուն մէջ չափէն աւելի բան չը-
լեցուի , որպէս զի յանկարծ սայլը
ճամբուն վրայ չկոտրի , կամ մէջինը
չթափի . անոր համար յիշելու է ռամ-
կին առածն որ կ'ըսէ . “Վիչ բարձիր,
շուտ դարձիր” :

Որպէս զի բերքերը կրելու ատեն
վտանգներ չհանդիպին՝ նայելու է որ
շատ գործածական ճամբաները ա-
ռաջուց շտկուին . որ պզտի ծախքով
մը կ'ըլլայ ու շատ օգուտներ ունի .
գործիքները դիւրաւ կ'ըբանին , կեն-
դանիներն ալ շատ չեն հոգնիր ու
չեն փասուիր . նմանապէս փոսերու ,
լճերու և առուններու վրայ շարժա-
կան կամուրջներ ձգելու է՝ լայն ու
հաստ տախտակներով ու Թուփե-
րով :

Հնձոց ժամանակէն քիչ մը առաջ
պէտք է պատրաստել նաև խուրճե-
րուն ու որաներուն կապերը : Եւ բա-
նիս համար տեսակ տեսակ նիւթեր

կը գործածուին . գլխաւորներն են կե-
նիստայ¹ , կաղնի² , տիլիայի³ կեղև ,
յարդ , ուռիի ճիւղ , ու կնիւն⁴ : Եւս-
հանրապէս կարծր բոյսերը ամուր ու
րայ կապելու չեն գար . բայց որոնք
որ քանի մը օրուան համար միայն կը-
կապուին՝ անոնց կ'ըյարմարին :

Եւս գաւառները , ուր որ տիլիայ
շատ կայ , գարնան ատեն մատղաշ
ճիւղերուն կեղևը կ'ըսրկրդէն կը հա-
նեն . աս կեղևը ճկուն ըլլալուն հա-
մար՝ արմտիքներուն ու խոտերուն ու-
րաները կապելու շատ յարմար կու-
գայ . և Թէ որ երբեմն երբեմն Թըջոց
դնես , շատ անգամ ալ կը գործա-
ծուի :

Սովորական գործածուածը հաճա-
րի⁵ յարդն է : Տարդով կապ շինելուն
կերպը ամէնուն յայտնի է . առաջ
յարդը գաւազանով կը ծեծեն , ետքը
հասկին կողմի ծայրը կը Թըջեն , ան
ծայրովը հանկուրց մը կը շինեն :

Եւս իրով շինուած կապը հաստա-
տուն չըլլալուն՝ քիչ կը գործածուի ,
և աւելի ցից ու խեչակ՝ կապելու
կուգայ՝ երկու իրերը մէկտեղ հիւ-
սած :

Հնձուած խոտերն ու արմտիքները
դիզելու համար երկու համբար պէտք
է . մէկուն մէջ լեցընելու է աղէկ
հնձուածները , մէկալին մէջ ալ անձ-
րևէ Թըջուած կամ կարկուտով փա-
սուածները . որպէս զի աս ետքիները
տաքնան նէ՝ հարկ չըլլայ բոլոր համ-
բարը տակնուվրայ ընել :

Եւս երջապէս հնձոց ատենը հասնե-
լէն առաջ՝ ամէն բանի նախատես ըլ-
լալու և ուրիշներուն ալ խորհուրդ
հարցընելու է : Ով որ աս զգուշու-
թիւններս ըրեր է՝ կրնայ հանգիստ
սրտով հնձոց ժամանակին սպասե-
րանակնկալ դիպուածները , և օգին
յանկարծական փոփոխութիւնները
քիչ փսաս կրնան ընել այնպիսոյն :

1 Գաւեր Լեւնալը , Բիւի Գոյարալը :

2 Փըլպէթ աղաճը :

3 Օհլամար աղաճը :

4 Սու :

5 Չալտար :

6 Ամալէթ :